ՎԱՐԴԱՆ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԵՄ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՆԳՎԱՆ

Այսօր Հարավային Կովկասի հետ հարաբերությունների հաստատումը կարևորագույն առաջնահերթություն է ԵՄ հարևան տարածաշրջանների հետ հարաբերությունների հաստատման գործում, քանի որ անմիջականորեն առնչվում է Եվրոպայի կայունության ապահովման հետ: Արևելյան գործընկերությունը Եվրամիության ծրագրերից է, որը նպատակ ունի խթանել փոխադարձ կապերն ու համագործակցության նոր չափումներ ստեղծել ու զարգացնել ԵՄ-ի, իսկ մյուս կողմից՝ նախկին ԽՍՀՄ-ի 6 հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Ուկրաինայի և Մոլդովայի միջև: Հարկ է նշել, որ Արևելյան Գործընկերությունն առաջին անգամ պաշտոնապես ներկայացվեց 2008թ.-ի մայիսի 26-ին Բրյուսելում Լեհաստանի և Չվեդիայի արտգործնախարարներ Ռադոսլավ Սիկորսկու և Կարլ Բիլդտի կողմից: Նախաձեռնության ներկայացման ժամանակ Նախարար Սիկորսկին նշեց, որ ինչպես «Հարավում», այնպես էլ «Արևելքում»՝ իրենք շրջապատված են եվրոպական հարևաններով: Լեհ և չվեդ նախարարները հակված էին այն դիրքորոշմանը, որ եթե ԵՄ-ն ձգտում է ամրապնդել իր համագործակցությունը հարավային ուղղությամբ, ապա անհրաժեշտ կլինի այդ քայլերը հավասարակշռել՝ շեշտադրում կատարելով նաև արևելյան ուղղության վրա [1]:

Ինչպես ամրագրված է 2009թ.-ի մայիսի 7-ին Պրահայում ընդունված միասնական հռչակագրում, որն էլ ծրագրի իրագործման պաշտոնական սկիզբը դարձավ, Արևելյան գործընկերությունը նպատակադրված է ստեղծել ԵՄ-ի և գործընկեր պետությունների միջև քաղաքական հաղորդակցումը և հետագա տնտեսական ինտեգրումը ապահովելու համար անհրաժեշտ պայմաններ: Այն չի նախատեսում ԵՄ-ին անդամակցություն, սակայն մի շարք օգուտներ է բերում մասնակիցներին: Ծրագիրը նախատեսում է վերափոխումների իրագործում հետխորհրդային 6 հանրապետություններում, երկկողմ ու բազմակողմ համաձայնագրերի կնքում, միասնական ինստիտուտների կառուցման ծրագրեր, ազատ առևտրի գոտիների ձևավորում, մուտքի արտոնագրի ռեժիմի ազատականացում, ինչպես նաև էներգետիկ անվտանգության ապահովում[2]:

---

[1] Տես Lapczynski Marcin, The European Union's Eastern Partnership: Chances and Perspectives, Cacausian Review of International Affairs, Vol. 3(2) – Spring 2009

[2] Տես Joint declaration of the Prague Eastern Partnership Summit, 7 May 2009, Prague, points 2- 9:

Ծրագրի վերաբերյալ Եվրահանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուել Բարոզոն նշեց. «Միայն երկու կողմերի քաղաքական ամուր կամքի և նվիրվածության շնորհիվ Արևելյան գործընկերությունը կկարողանա հասնել քաղաքական գործակցության և տնտեսական ինտեգրման իր նպատակներին: Մենք նույնիսկ պետք է ավելի մեծ ներդրում կատարենք մեր կայունության և բարգավաճման գործում: Այն արագորեն կփոխհատուցվի քաղաքական և տնտեսական դրական կարևոր արդյունքների ձեռքբերման միջոցով, ինչպես նաև կայունություն և անվտանգություն կապահովի թե ԵՄ և թե մեր արևելյան գործընկերների համար» [3]. Այս գործընկերության կարևորությունը ընդգծել է նաև Եվրոպական Հարևանության Քաղաքականության (ԵՀՔ) և արտաքին հարաբերությունների հանձնակատար Բենիտա Ֆերերո-Վալդները՝ նշելով, որ այն նոր էջ է բացում իրենց արևելյան հարևանների հետ հարաբերություններում: Հանձնակատարը միաժամանակ կարևորեց, որ այս ծրագիրը ձևավորվել է Հարավային Կովկասում և Արևելյան Եվրոպայում տեղի ունեցած իրադարձությունների հիմքով, որոնք ազդեցություն են ունենում ԵՄ-ի վրա: Ֆերերո-Վալդների համոզմամբ՝ Արևելյան Գործընկերության երկրների նկատմամբ ԵՄ քաղաքականությունը պետք է լինի հստակ, կանխարգելիչ և ուժեղ [4]:

Կարելի է փաստել, որ Եվրոպական միության ընդլայնումը հանգեցրեց նրան, որ վերոնշյալ վեց պետությունները ավելի մոտեցան ԵՄ-ին, իսկ արդյունքում նրանց անվտանգությունը, կայունությունը և բարգավաճումը սկսեց մեծապես ներգործել ԵՄ-ի վրա: Գործընկերության ծրագրի բոլոր մասնակիցները իրականացնում են տարբեր մակարդակների քաղաքական, տնտեսական և սոցիալական բարեփոխումներ և նպատակադրում ունեն ավելի սերտացնել գործակցությունը ԵՄ-ի հետ: Արևելյան գործընկերություն ծրագրով ԵՄ-ն իր Արևելյան գործընկերներին առաջարկում է հստակ, հեռահար աջակցություն՝ ժողովրդավարական և շուկայական վերափոխումների համար, որը կնպաստի նրանց քաղաքական և տնտեսական կայունությանը [5]:

Հիմնվելով ԵՀՔ-ում ունեցած առաջընթացի վրա՝ Արևելյան գործընկերությունը համագործակցության համար առաջարկում է երկակի և բազմակի լայնածավալ չափումներ: Հատկանշական է, որ ծրագրի իրականացման ընթացքում պահպանվելու է Եվրոպական Հարևանության Քաղաքականության գերակա սկզբունքը. այն է՝ թե որքան հեռու կգնա ԵՄ-ն յուրաքանչյուր երկրի հետ ունեցած հարաբերություններում, կախված կլինի գործընկերների կողմից

---

[3] Տես Lapczynski Marcin, The European Union's Eastern Partnership: Chances and Perspectives, Cacausian Review of International Affairs, Vol. 3(2) – Spring 2009

[4] Տես Արևելյան Գործընկերություն, http://www.mineconomy.am/am/94/

[5] Տես Eastern Partnership – Questions and Answers, 04.12.08, European Commision External Relations, http://ec.europa.eu/delegations/ukraine/documents/eastern_partnership/faq_en.pdf

իրականացվող վերափոխումներում և արդիականացման գործում ունեցած առաջխաղացումից:

Արևելյան գործընկերության ծրագրում առկա հիմնական կետերն են.

1. Նոր փոխկապակցման համաձայնագրեր՝ ներառյալ խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրեր նրանց համար, ովքեր պատրաստ են և ցանկանում են ձեռնարկել հեռուն գնացող գործողություններ ԵՄ-ի հետ,

2. ԵՄ-ի կողմից ձեռնարկված բազմակողմ ծրագրեր, որոնք նպատակ են հետապնդում զարգացնելու գործընկերների վարչական կարողությունները, որպեսզի կարողանան իրագործել ԵՄ-ի առաջարկները,

3. «Տեղաշարժի և անվտանգության մասին» դաշնագրերի կնքում, որոնք թույլ կտան հեշտությամբ օրինական կերպով ճանապարհորդել Եվրոպական Միությունում՝ միևնույն ժամանակ մեծացնելով ջանքերը կոռուպցիայի, կազմակերպված հանցավորության և անօրինական միգրացիայի դեմ պայքարում,

4. Հանձնաժողովի կողմից աշխատանքի շարժունակության հնարավորությունների քննարկում՝ ԵՄ աշխատանքային շուկայի հետագա ընդլայնման նպատակով, 5. էներգետիկ անվտանգության ապահովում ԵՄ-ի և նրա արևելյան գործընկերների համար, 6. Մարդկանց միջև շփումների զարգացում և քաղաքացիական հասարակության ու այլ շահառուների ներգրավվում, 7.Շրջակա միջավայրին և կլիմային առնչվող խնդիրների շուրջ ակտիվ համագործակցություն,[6] 8. ԵՄ տնտեսության հետ աստիճանական ինտեգրում՝ ներառյալ կարգավորման համապատասխանեցման վերաբերյալ օրենքով սահմանված հանձնառություններ, 9. Գործողություններ գործընկերների միջև ազատ առևտրային ցանց զարգացնելու ուղղությամբ, որի երկարաժամկետ նպատակը կարող է լինել Հարևանության տնտեսական համայնքին անդամակցելը,

10. Մասնակից երկրներում տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրեր, մասնավորապես այդ ոլորտներում առկա անհամաչափությունների հարթում, 11. Քաղաքականությունների չորս բազմակողմ հարթակների ստեղծում: Դրանք են՝ ժողովրդավարություն, հաջող կառավարում և կայունություն, տնտեսական ինտեգրում և ԵՄ քաղաքականությունների հետ համապատասխանություն, էներգետիկ անվտանգություն և միջանձնային հարաբերություններ, որոնք հետագայում կնպաստեն գործընկեր պետություններում բարեփոխումների անհատական ծրագրերի իրականացմանը[7]:

ԵՄ Հանձնաժողովը առաջ է քաշել հինգ առաջնահերթ նախաձեռնություններ՝ կիզակետում պահելով բազմակողմ համագործակցությունը: Նրանց հաջողությունը կախված կլինի գործընկերների կողմից իրականացվող

---

[6] Տես նույն տեղը:

[7] Տես Արևելյան Գործընկերություն, http://europeanmovement.am/page.aspx?id=248&lang=3

քաղաքական գործողությունների՝ ԵՄ-ի կողմից համապատասխան ֆինանսական աջակցության հետ մեկտեղ:

- Միասնական սահմանների կառավարման ծրագիր (ԵՄ ստանդարտներին համապատասխան, մարդկանց շարժունակության առաջընթացի համար անհրաժեշտ պայման),
- Բարենպաստ պայմաններ ՓՄՁ-ների համար (փոքր և միջին ձեռնարկությունները կստանան արտաքին խթան աճի և զարգացման համար տեխնիկական աջակցության, ֆինանսական միջնորդների, ռիսկային կապիտալի և վարկերի միջոցով),
- Տարածաշրջանային էլեկտրաէներգիայի շուկաներ, բարձր էներգետիկ արդյունավետություն և նորացված էներգետիկ ռեսուրսների մեծ կիրառում (համապատասխան կարգավորումներ և ֆինանսական մեխանիզմներ),
- Հարավային էներգետիկ միջանցք(սա կարևորագույն կառուցվածքային նախաձեռնություն է, որ նպաստում է տարանցման ուղիների և մատակարարման աղբյուրների տարբերակմանը ԵՄ-ի և նրա գործընկերների համար),
- Բնական և տեխնածին պատահարների արձագանքում, նախապատրաստում կամ կանխում (ամրապնդել արհավիրքների կառավարման ունակությունները և ձևավորել արդյունավետ համագործակցություն ԵՄ-ի և գործընկեր պետությունների միջև) [8]:

Հարկ է նշել, որ ԵՄ-ի Արևելյան գործընկերություն ծրագրի ձևավորման շարժառիթները մի քանիսն են: Նախ և առաջ Եվրամիությունը չունի բավարար ներուժ առավել ընդարձակվելու համար: Պատճառն այն է, որ գնալով ԵՄ-ում խորանում է ներքին տարբերակումը: Միասնական կառավարումը չափազանց բարդացել է, քանի որ տարբեր մշակույթների կրողները տարբեր կերպ են արձագանքում միևնույն գործողություններին ու ծրագրերին: ԵՄ անդամների շահերի տարբերությունների պատճառով առանցքային որոշումների ընդունման գործընթացը վեր է ածվում բավականին բարդ ու բազմամակարդակ համաձայնությունների արդյունքի: Իսկ Արևելյան գործընկերության մեջ ընդգրկված երկրներից մի քանիսը, մասնավորապես Ուկրաինան, Վրաստանը և Մոլդովան փափագում էին անդամակցել ԵՄ-ին: Այս առումով Արևելյան գործընկերությունը ԵՄ-ի արդարացումն է թեկնածու պետությունների առջև, որոնց առաջարկվում է համագործակցություն մի շարք ոլորտներում ԵՄ-ին անդամակցության փոխարեն՝ դրանով սառեցնելով նրանց սպասումները միանալու ԵՄ-ին: Մյուս շարժառիթը այն է, որ Եվրոպական հարևանության քաղաքականությունը, որի հիմքում ընկած էր ԵՄ-ի շուրջ «բարեկամների շրջանակի», բարգավաճման, կայունության ու անվտանգության գոտու ստեղ-

[8] Տես Eastern Partnership – Questions and Answers, 04.12.08, European Commision External Relations, http://ec.europa.eu/ delegations/ukraine/documents/eastern partnership/faq_en.pdf

ծումը, ինչ նպատակով էլ հարևան տարածաշրջանների երկրներին նախատեսվում էր տրամադրել զգալի տնտեսական և քաղաքական օժանդակություն, ընդգրկում էր չափազանց բազմազան տարածաշրջաններ ու պետություններ՝ Մարոկոյից մինչև Բելառուս, ներառյալ Իսրայելը, Եգիպտոսը, Սիրիան, Հարավային Կովկասը: Սրանք միմյանցից տարբերվում էին ոչ միայն իրենց պատմական ժառանգությամբ և զարգացման ուղիների ձևաչափերով, այլ նաև աշխարհառազմավարական տեղայնացմամբ: Որոշ ժամանակ անց ստեղծվեց Միջերկրածովյան երկրների միությունը, որը նախատեսված էր ԵՀՔ Միջերկրածովյան մասնակիցների՝ Հյուսիսային Աֆրիկայի և Միջին Արևելքի երկրների համար: Ուստի ԵՄ-ն անհրաժեշտ համարեց նաև նման ծրագրի ձևավորումը ԵՀՔ Արևելյան եվրոպական մասնակիցների համար: Այս ծրագրերի միջոցով ԵՄ-ն ցանկանում է մեծացնել դրանց անդամ-պետությունների օրենքների և սկզբունքների համապատասխանությունը իր չափանիշներին: ԵՀՔ-ի «անորոշության» ուժգնացմանը և քաղաքականության արդյունավետության մակարդակի նվազմանը նպաստեց նաև ԵՄ-ի և ԱՄՆ-ի երբեմնի բազմակողմ ջանքերի ակնառու նահանջը, ինչը առավել պարզ դարձավ հատկապես 2003թ. իրաքյան պատերազմի հետևանքով առաջացած հակասությունների ֆոնին: Ի տարբերություն Եվրոպական հարևանության քաղաքականության՝ Արևելյան գործընկերությունը օպերացիոնալ տեսանկյունից ավելի առարկայական բնույթ է կրում, չնայած որ համագործակցության ստեղծվող ձևաչափը դեռևս բավարար չափով ինստիտուցիոնալիզացված չէ: Մեկ այլ շարժառիթ է համարվում այն, որ ԵՄ-ն ունի իր շահերը այս վեց երկրներում: Այդ նպատակով նրանց տրամադրելով աջակցություն որոշ հարցերում՝ ԵՄ-ն փորձում է այս երկրներին վերցնել իր ազդեցության ներքո՝ դրանով վերահսկելով հետխորհրդային տարածքի մի մասը: Սակայն այս ամենը ԵՄ-ի կողմից երբեք չի բարձրաձայնվում, քանի որ վերջինս չի ցանկանում լարվածություն ստեղծել Ռուսաստանի հետ և իր այդ նպատակին փորձում է հասնել անուղղակի ձևով:

Հարկ է նշել, որ ի տարբերություն Եվրոպական Հարևանության Քաղաքականության՝ օպերացիոնալ տեսանկյունից Արևելյան գործընկերությունն ավելի ֆոկուսացված և առարկայական բնույթ է կրում, թեև համագործակցության ստեղծվող ձևաչափն առայժմ բավարար չափով ինստիտուցիոնալիզացված չէ: Ավելին, չնայած ԵՄ պաշտոնական դիտանկյունից ծրագիրն իր մեջ կրում է նշանակալի գործառնական չափում (միջազգային հարաբերությունների տեսական մոտեցումներից, որը ենթադրում է արտաքին և ներքին քաղաքականությունների համասեռություն) և նպատակային հեռահար ուղղվածություն ունի հասնելու ԵՄ և վերոհիշյալ երկրների կառավարչական, էներգետիկ և քաղտնտեսական սեկտորների համապատասխանեցման բարձրացմանը՝ այդուհանդերձ ծրագրի իրագործումը կարող է ակնհայտ դարձնել մեկ

այլ մեծ միտում, որի հենքում ընկած կլինեն ավանդական ռազմավարական մրցապայքարի շարժառիթները:

Քաղաքական և ռազմավարական դիսկուրսի և պրակտիկայի հարթության մեջ, ի նկատի ունենալով վերոհիշյալ իրողությունը, Արևելյան գործընկերություն ծրագիրը փաստացիորեն իր մեջ կրում է երկակի՝ որոշ իմաստով հակասական միջազգային կողմնորոշումներ: Մի կողմից Գործընկերության ծրագիրը կարող է խթանել փոխգործակցային ուղղության զարգացումը՝ նպաստելով Ռուսաստանի անմիջական մասնակցությամբ համընդհանուր եվրատլանտյան անվտանգության և կայունության նոր ճարտարապետության կայացմանը [9]: Մյուս կողմից՝ այն կարող է սկիզբ դնել մրցակցային տարրերի ուժգնացմանը, ինչն իր գործնական դրսևորումը կարող է գտնել ավանդական զսպման և հավասարակշռման ռազմավարությունների մեջ, որոնք, հնարավոր է՝ կորդեգրեն միմյանց հանդեպ տարածաշրջանային զարգացումների մեջ ներգրավված երկու ակտորները՝ Ռուսաստանը և ԵՄ-ն: Ընդ որում, հատկանշական է, որ երկու կողմերն էլ փաստորեն ընդունում են, որ հետխորհրդային տարածաշրջանում նրանք ոչ բարեկամներ են, բայց ոչ էլ թշնամիներ:

Սկզբնական շրջանում Եվրոպական հարևանության քաղաքականության հենքում ընկած էր ԵՄ-ի շուրջ «բարեկամների շրջանակի», կայունության, անվտանգության և բարգավաճման գոտու ստեղծումը: Հիշյալ ընդհանուր հայեցակարգի իրագործման հիմնական միջոցների շարքում էր տնտեսական և քաղաքական զգալի օժանդակության տրամադրումը հարևան տարածաշրջանների երկրներին՝ կոնսոլիդացնելու և արագացնելու վերջիններիս զարգացման ծրագրերը: Այդուհանդերձ, Բրյուսելում նախապես ընդգծեցին, որ ԵՀՔ-ի ծրագիրը միտված չէ վերաճելու ընդլայնման մի նոր փուլի: Ավելին, հարևանության ծրագիրը իր մեջ ներառում է բավականին խայտաբղետ պետություններ և տարածաշրջաններ, որոնք տարբերվում էին ոչ միայն իրենց պատմական ժառանգության յուրահատկությամբ և զարգացման ուղիների «ծևաչափերով», բայց նաև աշխարհառազմավարական տեղայնացմամբ՝ իր մեջ ընդգրկելով ինչպես Արևելյան Եվրոպան, այնպես էլ Հյուսիսային Աֆրիկայի ու Մերձավոր Արևելքի մի շարք պետություններ:

ԵՄ-ի Արևելյան գործընկերություն ծրագրի նկատմամբ քաղաքական մոտեցումների երկու խոշոր խմբեր է հնարավոր առանձնացնել: Դրանցից առաջինը, որը գերակայող էր մասնավորապես սկզբնական փուլում (2008-2009թթ.), ելնում էր մայրցամաքային արդի իրադրության քաղաքական և ռազմավարական բևեռայնության թեզիսից (system-level polarity): Այսպես, օրինակ, Արտաքին քաղաքականության Գերմանական խորհրդի ծրագրի

[9] Տե՛ս Россия XXI века: образ желаемого завтра, Институт современного развития, М. 2010, ст. 47:

ղեկավար Ա.Ռարի կարծիքով Արևելյան գործընկերությունը Եվրահանձնաժողովի «ոչ առավել նշանակալի օրակարգն է, որը Եվրամիությունը մշակել է արևելյան ուղղության քաղաքականության ուղղորդման համար»: Գերմանիան և Ֆրանսիան, որոնք մինչ այժմ ձգտում էին համակարգել ԵՄ գործունեությունը արևելքում, կողմնորոշված էին զարգացնելու առաջին հերթին համագործակցությունը Ռուսաստանի հետ: Ըստ Ռարի՝ «այժմ մենք թևակոխում ենք մի նոր փուլ, երբ Ռուսաստանին կմեկուսացնեն և կսկսեն նրա վրա ճնշում գործադրել: Հատկանշական է, որ գերմանացի փորձագետը ընդգծեց մի կարևոր հանգամանք. ԵՄ-ն ներառում է իր շահերի ոլորտ նաև Բելառուսին և Ադրբեջանին, ինչը փաստում է Միության մտադրության մասին մերձենալ ոչ այնքան ժողովրդավարական պետությունների հետ, որքան զսպել Ռուսաստանին:

Ինչ վերաբերում է ԵՄ-ի Արևելյան գործընկերություն ծրագրի աշխարհաքաղաքական ուղղվածությանը և առհասարակ եվրոպական հարևանության արևելյան քաղաքականությանը, ապա մի կողմ թողնելով ԵՄ ներքին տրանսֆորմացիայի և արտաքին մասնավոր ազդակներով պայմանավորված շարժառիթները, հարկ է նշել, որ վերջերս մեկնարկած նախաձեռնությունները ինկորեմենտալ բովանդակություն կրելուց զատ պարունակում են նաև լատենտ հավասարակշռման որոշակի տարրեր: Համենայնդեպս, ՌԴ հարակից եվրասիական գոտիներում ինտեգրացիոն նախագծերի մրցակցությունը համադրելիության բացակայության պայմաններում կարող է խթանել հեռանկարում հավասարակշռման և զսպման ռազմավարական կողմնորոշումը:

2009թ-ի մայիսի 7-ին Պրահայում տեղի ունեցած ԵՄ-ի գագաթաժողովը դրեց Արևելյան գործընկերության մեկնարկը [10], որը մի կողմից Հայաստանի, Ադրբեջանի, Բելոռուսի, Վրաստանի, Մոլդովայի, Ուկրաինայի և մյուս կողմից ԵՄ-ի և նրա անդամ-պետությունների և կառավարությունների ղեկավարների միջև, որտեղ քննարկվեց կողմերի միջև ԱԳ-ի կողմից սահմանվող հարաբերությունների նոր մակարդակը: Հանդիպման ընթացքում ընդգծվեց, որ ԱԳ-ը ԵՄ-ի անդամ երկրների և արևելաեվրոպական երկրների ջանքերի արդյունք է և հիմնվում է կողմերի փոխադարձ շահերի և պարտավորությունների վրա: Պրահայի գագաթաժողովի մասնակիցները միակարծիք էին այն հարցում, որ ԱԳ-ը պետք է հիմնվի միջազգային իրավունքի սկզբունքների և հիմնարար արժեքների վրա՝ ժողովրդավարություն, օրենքի գերակայություն, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգում, շուկայական տնտեսություն, կայուն զարգացում և լավ կառավարում: Հանդիպման վերջում մասնակիցների կողմից ընդունվեց «Միացյալ հռչակագիր՝ Արևելյան գործընկերու-

[10] Sto European Council. Joint Declarations of the Prague Eastern Partnership Summit, Prague, 7 May 2009. 8435/09 (Presse 78). Brussels, 7 May 2009.

թյան Պրահայի գագաթաժողովի վերաբերյալ»[11]: Մասնակիցները ցանկություն են հայտնել խորացնելու և արդյունավետ դարձնելու երկկողմանի հարաբերությունները ԵՄ-ի և գործընկեր-երկրների հետ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երկրի յուրահատուկ իրավիճակը և նպատակները՝ հարգելով գոյություն ունեցող երկկողմանի հարաբերությունները ԵՄ-ի և գործընկեր-երկրների միջև: Ինչ վերաբերում է այս գործընկերության ներքո տրամադրվող լրացուցիչ ֆինանսական օժանդակությանը, ապա 2008թ-ին տրամադրված 450 մլն. եվրոյից բացի մինչև 2013թ. տրամադրվելու են լրացուցիչ 350 մլն. եվրո ֆինանսական միջոցներ[12]: Հայաստանի դիրքորոշումն այս նախաձեռնությանը բարձրաձայնվեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից, ով այդ օրը նշանակալից համարեց հայ ժողովրդի և «Արևելյան գործընկերություն» ծրագրում ընդգրկված այլ երկրների համար: Ս.Սարգսյանն այս ելույթի ժամանակ մասնավորապես ասաց. «Մենք մտնում ենք այս գործընթացի մեջ մեր շուկաները փոխադարձաբար ավելի մատչելի դարձնելու, մեր քաղաքացիների և հասարակությունների միջև երկխոսությունը խթանելու, ապագան համատեղ կերտելու և մեր մշակույթները փոխհարստացնելու ձգտմամբ: Եվ ես հավատում եմ, որ դա մեզ հաջողվելու է»[13]: Նախագահի այս ելույթը փաստեց ՀՀ-ի դիրքորոշումը՝ ակտիվորեն ներգրավվելու Արևելյան գործընկերության շրջանակներում ծրագրվող նախագծերին: Այս կառուցողական մոտեցումը, սակայն, հնարավորություն չի տալիս հասնել նույնօրինակ կառուցողական հարաբերությունների ծրագրի մյուս գործընկերների, մասնավորապես՝ Ադրբեջանի հետ ընդհանուր քայլերի խորացմանը: Այսինքն՝ տարածաշրջանային անհամաձայնություններն ու հակամարտությունները սեպ են խրում գործընկերային հարաբերությունների միջև, քանի որ դեռևս չեն հասել վստահության այն մակարդակին, որի մասին հաճախ խոսվում է ԵՀՔ-ի շրջանակներում:

Ամփոփելով կարելի է նշել, որ Արևելյան գործընկերության շրջանակներում հարաբերությունների խորացումը հանդես է գալիս որպես ռազմավարական անհրաժեշտություն, ինչն ակնհայտ դարձավ հատկապես 2008թ. վրաց-հարավօսական 5-օրյա պատերազմից հետո, երբ տարածաշրջանում կայունության պահպանմանը ձգտող երկրները կանգնեցին այդ քաղաքականության ձախողման վտանգի առաջ:

---

[11] Տես Joint Declaration of the Prague Eastern Partnership Summit, 7 May 2009, Prague, www.mineconomy.am/upload/file/Joint%20Declaration.pdf, 23/03/2010£

[12] Տես www.banker.am/news.php?news_cat_id=9&news_id=3524&lang=1&color=b, 12/04/2010

[13] Տես ՀՀ նախագահը ԵՄ Արևելյան գործընկերությունե նախաձեռնությունը համարձակ ու փոխշահավետ է համարում: Ե., 8 մայիսի: http://www.newsarmenia.am/arm1/20090508/4207015_2.html